զորս ոսկի դեղովք, որ մի քան զմին դեղեցիկք էին. եւ ամէն օտայ ազգ մի զօյգս կայր։ Եւ մին օտան կայր սեւ մէգամէրէ սեղան մի, զարնիչանի քաշած. եւ մէջն ոսկի եւ արծաթ լցած եւ պատվական ակամբք ընդելուզած՝ նման սեղանոյն Պաղոմէոս Թագաւորին, զոր առաքեաց յԵրուսաղէմ Հրէիցն. եւ յայլս տեսաք լանվարդի քար եւ ի վերայ սուրաթնի։ Իսկ այլ տեղ պատկեր մի զարմանալի տեսաք. զի երբ դէմն կանգնիս՝ Քրիստոս կ՝երեւի. եւ երբ յաջ կողմն՝ Աստուածածնեն Միածնովն. եւ ձախմէ՝ Քրիստոս ի սիւնն կապած։ Եւ աւելի քան զԴ՚ օտա կայր, ամէնն զարդարած եւ միջվին զօհվանի. եւ քաղաքն առջեւն որպէս խնծոր կ՝երեւէր։ Եւ ի դրախտն մտեալ տեսաք բազմագիմի կերպս եւ պատկերս եւ չինուածս քարէ, որ ամէնէն ջուր բխէր։ Այլ եւ կային ազրիւրք բարէհամք եւ չատրվանք զարմանաչէնք, որ վազէին ջուրքն երկու, երեք մարդապօյ բարձր։ Եւ կայր ազգ մի մորենի անթառամ, զոր յամառն եւ ձմեռն կանաչ եւ դեղեցիկ, որ իրրեւ զիմէլ կամ սառնամածուխ պատատին սազարթքն եւ ծածկեն զպատերն, որպէս կանանչ աթլասով։ Եւ յառաջ գնացեալ տեսաք ազրեր մի մեծ եւ գմպէթաչէն, որ նստեալ էին ի մէջն բոլոր զազրալի եւ զազանակերպ գարշ մարդիք, որ վոդ հնչէին. եւ փոխանակ ձայնից ջուր ելանէր. եւ չինած էր ի վերայ մայ-

24 լցաք։